

ՀՆԶԱԿ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

4. ՊՕԼՍԻ ԴԵՊԲԵՐԸ.

Օգոստոս 26-ից ի վեր Ա. Պօլսի ներկայացնում է մի թատր ամենաեղերական դէպքերի: Սուլթանի բարբարոս կառավարութիւնը դարձեալ ջարդում է հայերին, և այս անգամ ուղղակի եւրօպական տէրութիւնների աչքի տակ: Ղէպքերի նկարագրութիւնները դեռ անորոշ են և մինչև հիմա յայտնի եղածներից կարողանում ենք քաղել մի քանի գիծ միայն: Այսին ախ, որ չորեքշաբթի օրը մի խումբ մարդիկ յարձակվում են օսմանեան բանկայի վրայ և աջողում ենք մանեղ՝ մի քանի պահպան սպանելուց յատույ: Քիչ վերջ նոյն բանկայի կառավարչի և ուստական գեսպանատնից Մաքսիմովի միջամտութեամբ յարձակվողները դուրս են հանվում բանկայից և ապա փոխադրվում մի Ֆրանսիական շողենաւ, որն ուղևորում է դէպի Մարսէլ: Յայտնի է նոյնպէս, որ քաղաքի մի քանի տեղերում պայթում են նաև ուռմբեր, որից մի թէ երկու տեղ սպանվում և վիրաւորվում են մի քանի թիւրք զինուորներ: Հէնց նոյն օրն էլ սկսվում են ջարդերը. թիւրք խուժանը գննված յարձակումներ է դործում հայոց թաղերի, աների ու խանութների վրայ և կոտորած անելով կողոպտում ու աւարում անհամար հարստութիւններ: Կոտորված հայերի թիւը տակաւին որոշ յայտնի չէ. ստացված տեղեկութիւնները զրա մասին խիստ տարբեր են և ընդհանուր կարծիքն այն է, թէ տասը հազարն անցնում է: Այդ ջարդերն անընդհատաբար տեւում են երեք օր և այս վերջին երկու-երեք օրն էլ տեղ-տեղ դարձեալ պատահել է: Ահա ընդհանուր գծերով Ա. Պօլսի դէպքերի նկարագրութիւնն, այնպէս, ինչպէս մինչև այսօր հասած են եւրօպական լրագիրներին:

Թէ ո՞վքեր են բանկայի վրայ յարձակվողները, տակաւին յայտնի չէ: Բայց այստեղ հարկ ենք համարում վճռական կերպով հերքել թիւրք կառավարութեան և սրա խնկարկու մտմուլի այն լուրը, որով Ա. Պօլսի այդ վերջին դէպքի նախաձեռնող ու հեղինակ ներկայացվում է Հնչակեան Կուսակցութիւնը: Մենք յայտարարում ենք, որ Կուսակցութիւնն բոլորովին օտար է այդ դէպքին, որին ոչ մի կերպ մասնակցութիւն չէ ունե-

ցել: Այս հերքումը տալով, շարունակենք մեր խօսքը:

Եթէ ձիշդ է այն լուրը, թէ բանկայի վրայ յարձակվող և մայրաքաղաքում շարժում առաջացնել փորձող խումբը հայ յեղափոխականներ են, այդ ձեռնարկը դեռ չարած՝ պէտք էր արդէն նախապէս վիժված համարել, քանի որ ներկայ քաղաքական հանգամանքներում այդպիսի մանր ձեռնարկներ չեն կարող նպաստաւոր լինել հայկական դատի համար: Այդ քայլը մտածված ու կրճոված չէր և բոլորովին անժամանակյարմար էր նաև այն պատճառով, որ վերջին ամսւայ ընթացքում ակնյայտնի էր, թէ սուլթանի կառավարութիւնն արդէն փնտռում էր և ձիւ թափում ստեղծել իսկ մի պատրուակ հայերին ջարդելու հէնց նոյն Ա. Պօլսում: Այսպէս, ոչ ոքի համար դաղանիք չէ — և հրատարակվեցաւ եւրօպական թերթերում անգամ, — թէ սրանից մի քանի շաբաթ առաջ թիւրք ժողովուրդը Ա. Պօլսում կառավարութիւնից իրը «հաց» էր պահանջում, հակառակ դէպքում սպառնում հայկական թաղերն աւարել, կողոպտել և կոտորել «գեաւուրներին»: Սուլթանի կառավարութիւնը, բնականաբար, իր միւսիւլմանների այդ զրգուման առաջն առնելու համար ոչ միայն հարկ եղած միջոցների ձեռք չառաւ, այլ և ինքը լինելով նրանց զրգողը, այսօր բացարձակ ճշմարտութիւն է որ Ա. Պօլսի ջարդերում այդ խուժանն ամբողջ գննված էր և իր զօրխային դործողութեան մէջ վայելում էր նոյն իսկ օսմանեան զօրքերի ամենաեռանդուն ու բուռն աջակցութիւնը: Պարզ է, որ կառավարութիւնն ամեն նախապարաստութիւն տեսած էր և սկսելով կոտորածները, անմիջապէս փորձեց հեռագիրներով խեղաթիւրել եղելութիւնները և իր ուղած կերպարանքի տակ ներկայացրնել նրանց: Այսօր եւրօպական մամուլը գրեթէ միաբերան այդ կարծիքն է յայտնում, և դեռ Ֆրանսիական «Temps» լրագրում, որին չէ կարելի մեղադրել թիւրքափառացութեան մէջ, դրականապէս յայտարարում է, որ սուլթանի կառավարութիւնն արդէն ժամանակից ի վեր մտաշիր էր կոտորած անել՝ Ա. Պօլսում և թէ եթէ հայ յեղափոխականները նրա նպատակի համար չը ստեղծէին մի պատրուակ այս շաբաթ, նա, կառավարութիւնն, իր միտումը իրադրութեւ կը ջանարեղիւ շաբաթ վերջ:

Անհերքելի է, արդարև, այն, թէ ներկայ քաղաքական հանգամանքներում թիւրք կառավարութիւնը միշտ փնտռող ու թախանձող է որ և է պատրուակի հայերին կոտորելու համար, և քաջ զիտէ, որ կը մնայ անպատիժ այսուհետեւ էլ, ինչպէս մնաց մինչև այսօր: Աւ նոյնպէս եւրօպական տէրութիւններն իրանց ամբողջ ընթացքով այս վերջին տարւոյ միջոցին ապացուցին, որ իրանք բնաւ հետամուտ չեն հայկական դատի բաւարար լուծման և կատարելապէս անտարբեր են դէպի հայկական կոտորածները, և նրանցից ոմանք մինչև իսկ ոչ թէ անտարբեր են, այլ և գաղտնի գործակից ու նեցուկ են սուլթանին՝ արա ամբողջ հայակործան քաղաքականութեան ու գործողութիւնների մէջ: Աւ ահա այսօր այդ հին գաղաւնը, այդ հրէշ-մարդը, որ իր ամբողջ կայսրութիւնը հեղեղեց հայոց արիւնով, այդ ամենավախկոտը վախկոտ բռնապետներից, ամենազղուելին դարձաւ արարածներից և ամենաանյաղն արիւնախոտներից, — այդ սուլթան Համէտը, իր շաւարը հաւաքած մինչև ծնկները և առաջ զնալով արեան մէջ՝ ոճրագործի դաշոյնն է փայլեցնում և մէկ ազդ ձգնում ոչնչացնել ամբողջ լուսաւոր Աւրօպայի լուսաւոր քաղաքակրթութեան արեւի տակ — և դարձեալ մնում է անպատիժ... Աւ ո՞վ զիտէ թէ նա հէնց վաղն աւելի շոյված չի լինիլ նոյն եւրօպական տէրութիւնների կողմից, արանք, որ մինչև կոկորդ խրված են իրանց շահախնդիր ու եսամոլ յանցանքի մէջ, իրանց երեսին կրելով հինգ արիւնոտ մասների հետքեր, որ իր ոսկրացած ձեռքով ապտակում է նրանց մի նահատակ ժողովուրդ՝ զոհ եղած ոճրագործ թագաւորների ու մարդկութեան ձակատաղրի հետ քաղաքականութեան թղթախաղութեամբ արեւոյնների մարդասպան տապալի հարուածներին:

Ամբողջ Աւրօպայում այսօր տիրում է մի քաղաքականութիւն. — քաղաքականութիւն բարբաւոսութեան ու մարդասպանութեան:

Ազգային այն նսեմ եղերութիւնը, որ արիւնալի տեսարաններով անվերջ կերպով գլորվում է ամբողջ աշխարհի առջև ահա մօտ երկու տարի, կը տանէ հայ ազգին դիպի կորուստ, եթէ միայն սա իր ամենավերջին ճիգերը չը թափէ իր փրկութեան համար: — Մի Արէտէ այսօր ստանում է իր ապստամբական արդար ու գովելի ջանքերի վարձատրութիւնը — և եւրօպական հասարակաց կարծիքը և նոյն իսկ թիւրքի բարեկամ տէրութիւնները գտնում են նրան արժանի այդ «բաղդին», որովհետև Արէտէն իմացաւ իրան պաշտպանել մինչև վերջ: Իսկ եթէ հայ ազգն այս արիւնաշատ ըրպէնքերին լքանէ և յուսահատվէ, անտարակոյս, նրան էլ արժանի կը համարեն մէկ այլ

վախճանի — կորստի: Այսօր մեր սեփական բարոյական, և առաջնապէս բարոյական, զօրութեան մէջն է, որ մենք պէտք է փնտռենք միակ ուղեցոյցը մեր կեանքի դժոխքից դէպի բազմ: Այդ բարոյական փրկիչ զօրութիւնը մենք կարող ենք ձեռք բերել միայն մի պայմանով. այն է նորոգելով մեր յեղափոխական ոյժերը, համախմբելով մեր շուրջը միմիայն այն անկեղծ, շիտակ ու անշահախնդիր տարրերը, որ տակաւին ունի իր ծոցում հայ ազգը, և միանգամից ընդ միշտ պոկելով մեր մարմնից հիւանդ, ապականված, անբարոյական ու երկպառակութիւն սերմանող տարրերը:

Աւ այդ անարժան ու փնասակար ասպետներից ազատելով յեղափոխական ասպարէզը, մաքրելով յեղափոխական շարքերը, ընդունելով նոր, անկեղծ ու անխարդախ ոյժեր և ընտրելով մեզ նշանաբան՝ անկեղծ Վործին՝ անկեղծ գործիչներ, — ընդհանուր ուժով, աւելի եռանդով շարունակենք մեր Վործի կռիւը, գործադրելով նորանոր միջոցներ ու եղանակներ, ազգային ու քաղաքական հանգամանքների համապատասխան ընթացք՝ լուսաւոր մտքի ու բարոյականի առաջնորդութեամբ: Աւ այդ ժամանակ, և այդ պայմանով, և միմիայն այդ պայմանով հայ ազգը կը ստանայ նոր բարոյական զօրութիւն՝ ընդունակ առաջացնելու նոր յոյսեր և սրանց հետ միասին՝ նոր ու ներկայումս նպատակայարմար գործեր:

ՎԱՆԻ ԴԵՊԲԵՐԸ.

Երեսուն տաճկահայտակ քրդեր 50 եղ աղ բեռցած՝ 13 յունիս լուսաբացին գաղտնի կերպով (մաքսից խոյս տալու գիտաւորութեամբ) ուզում են մտնել քաղաք. յանկարծ գիշերապահ ոստիկանները վերայ են հասնում և հրամայում, որ բեռները քշեն դէպի մաքսատուն: Աղը տանելիս են լինում Պարսկաստանից. իսկ Պարսկաստանի հանքային աղը արգելուած է Տաճկաստան մտնել: Երբ որ տանում են, մաքսատան կառավարչին հազար ու մի դիմումներ անելուց ու կաշառքներ տալուց յետոյ, հաղիւ են աջողում յայտնի կերպով մի քանի բեռներս մտնել Վասպուրական: Իսկ ընդհանրապէս Պարսկաստանի աղը քրդերը տանում են գաղտնի և շարունակ կուլելով մաքսատան ծառայողների հետ: Քրդերը մօտենալով ոստիկաններին խնդրում, կաշառք են առաջարկում, բայց ոչ մի կերպով համաձայնութիւն կայացնել նրանց հետ չեն կարողանում: Թուրք զինուորը սկսում է իւր սովորական հայհոյանք երը, և երբ չափից անցնում է քրդերը դէնքի են դիմում, կռիւը սկսում է, որը տևում է մի ժամ, որից յետոյ քրդերը տալիս են 3 զոհ, իսկ զինորները՝ 5: Քրդերը ցած են թափում աղերը և շտապով քշում եղերը, իսկ ոստիկանները հարահուրայոցներով քաղաք են մտնում և դիմելով ոստիկանապետին՝ պատմում եղելութիւնը: Ոստիկանապետ Նուրին հէնց մի առիթի էր սպասում,

խնդրանքները, ինչպես նաև, ինչպես հասնում է զինվորների առաջ և գնում գեպի վաղին: Կանչում է անմիջապես զինվորական փաշան, խորհրդակցում են և ցրում:

Գեո լոյսը նոր էր բացում, մարդիկ քնից չէին արթնացել, որ հրեշ սուլթանի գաղան զինվորները սկսում են իրենց բարբարոսական բնավորության յատուկ դժոխային արհաւիրքը: Հեռավոր թաղերից 12 հոգի արհեստավոր հայեր աղօթքներ մղեցին զալիս են լինում գեպի իրենց խանութները: Նրանք անտեղեկ լինելով գիշերային պատահած գեպերից, անցնում են այն փողոցով, որտեղ պատահած է լինում գիշերային գեպեր և որով միշտ գալիս են լինում իրենց խանութները: Նուրիս գիշերապահների հետ հասնում գեպերի տեղը, որ գիշերները վերցնել տայ, երբ պատահում են հայերին. Նուրիս բղաւում է. «ես չէի ասում, զալիս խնդրի գործը կը լինի. գէ իսլամներ, յանուն մեծ մարգարէի տեսէք սրանց լըրութիւնը, տեսէք աչքերով և հաւատացէք իմ քաջածնեւոյ այս լըրերի ձեռքից. գիշերը սպանել են, այսօր էլ եկիլ են այսպէս վաղ իրենց պատերազմի դաշտը իրը յաղթող՝ կառավարութեան ու ձեզ վրայ ինդալում»:

Գեո խօսքը բերանումն է լինում, որ զինվորների հրացանները որոտում են և մի ակնթարթում վերջ են տալիս 12 անմեղ, անզէն հայերի կեանքին: Ժողովուրդի մեծ մասը լսում է հրացանների ձայնը, բայց ամբողջ 2 ժամ չի համարձակւում դուրս գալ տնից և տեսնել թէ ինչ է կատարւում իր տան առաջ: Իսկ մի կարգ յեղափոխական կոչւող պարոններ էլ մոռացած իրենց սրբազան պարտականութիւնը, անտարբեր են գտնւում գեպի ընդհանուր շարժումը: Խեղճ ժողովուրդ, սուր կոպէկդ, թէ չը տաս գլուխդ մարմինիցդ կը պոկեն և կասեն թէ մատնիչ էր կամ թէ ոչ 20 հոգիով տանդ վրայ կը յարձակին տունըդ քանդելու համար:

Քնած չէ շնչակեան Մարտիկը իր քաջերով. նա Գարման գիւղի մօտիկ սարից լսում է հրացանների ձայնը, խնդրում է տղայոց, որ համբն հրացանների քանի տեղամ արձակւիլը: Տղերքը համբում են 80: Մարտիկ Լեւոնեանցը խնդրի իր քաջերից մէկին ուղարկում է Կողպանից գիւղը, կանչում այնտեղ եղող մի զինվոր, որին ուղարկում է Վան լուր բերելու համար (այդ ժամանակ քաղաքի մէջն են լինում Գաշնակիսաներ և Արմինիստները), իսկ ինքը իւր ամբողջ խմբով, որ հասնում էր 120-ի, ամբողջ օրը նստում է արևի տակ և խօսում նրանց, թէ ինչ են նրանք և ինչու են համախմբւած: Երբ վրայ է հասնում գիշերը, Մարտիկի և տղայոց համբերութիւնը հասնում է լսելով անընդհատ հրացանների ձայնը, չեն կարողանում երկար սպասել, ցած են իջնում լեռնից և բռնում քաղաքի ծամբան: Նրանք ոչ թէ գնում էին, այլ թռչում:

Արդէն փախչողների կարաւանն էլ սկսել էր գեպի Պարսկաստան: Մերայնոց տեսնողները փռւում են նրանց ոտներով, թէ մի գնաք կը կոտորէք: Ոչ ծերի խրատը, ոչ համեստ կոյսի աղաչանքը, ոչ հայ կրօնից հեկեկանքը և ոչինչ չէ կարողանում յետ կասեցնել նրանց: Արեւը սարսափելի կերպով այրում էր: Մեր հրոսակային խումբը առ ոչինչ համարելով արևի տաքութիւնը և 300-ական պատրօնի, մի-մի հրացանի, մի-մի տարրձանակի, 100-ական փամփուշտի, մի-մի սրի և զանազան այլ իրերի ծանրութիւնը մէջքում, վազում էր գեպի

պատերազմի դաշտը: Կէսօրայ տապին խումբը անթի ծարաւ, համարձակ կերպով մտնում է քաղաք «Մեր Հայրենիքի» երգը երգելով: Քաղաքը իրարանցման մէջ է ընկնում. կառավարական զինվորները խոյս են տալիս: Մարտիկ Լեւոնեան 15 յունիսին մտնում է Վան և խումբը բաժանելով, ցրւում է հետևեալ փողոցներում. Այգեստանի-Նախիր փոխան, Փաշի փողան Միրաւի 2ագր, 2արջի փողան, Նորաշէն, Շան փողան և Հանգուցներ: Քաղաքից սիրտ են առնում, դուրս են գալիս և գեպի տղերքը վազում: Երբ Մարտիկը հրահանգներ էր տալիս խմբերին, իւր ընկերներից մէկի կինը բողբոջին մերկ վազում, փաթաթւում է Մարտիկի ոտներին և ասում լալագին. պարոն Մարտիկ, էլ ոչինչ չունեմ, ոչ տուն, ոչ ամուսին, ոչ քոր, ոչ եղբայր և ոչ մի ազգական. անգութները զառամեալ ծերերից սկսեալ մինչև մանկափոքրիկ մանուկը սրէ են անցկացրել, մեր տունն ու տեղը քանդել, աւերել են. ես հրաշքով ազատեցայ, ընկնելով ջրհորի մէջ: Աւերած է ս. Յակոբի թաղը 1000 տուն, Արո-Գար 1000 տուն, Խախկայ-Վանը 1000 տուն, այդ բոլորից մէկ չորրորդն է միայն կարողացել ազատւել, իսկ մնացածները անխոր կերպով կոտորւել են: Գեո կինը իր խօսակցութիւնը չէր վերջացրել Մարտիկի հետ, երբ յանկարծ լսեցաւ հրացանների որոտի հետ Շան-փողանի սուլիչի ձայնը: Մարտիկը անմիջապէս օգնութեան է հասնում իւր մօտ գտնւած զինվորներով: Թշնամին կորցնում է գլուխը, շեղում է ճանապարհը և մտնում մի այլ փողոց, որտեղ նոյնպէս պատահում են ընդդիմութեան. մտնում են մի ուրիշ փողոց էլ ընդդիմութիւն. քրդերից ընկնում են անսպասելի քանակութեամբ: Ինքնաբերաբար երեք ներկայացուցիչները հանդիպում են իրար և խօսում վճռում իրենց անելիքը: Ծակել են տալիս պատերը, կտրատում են ծառեր և հարթում այլ խոչընդոտներ, որոնք արգելք էին դառնում իրենց կուին: Մինչև ամի 21 ը յեղափոխականները կուում են անասելի քաջութեամբ և ռազմագիտութեամբ: Այդ 6 օրուայ ընթացքում հայերը ընդամենը տալիս են 40 զոհ երկու սեռից, իսկ քրդերից և զինվորներից իրենց ասելով, ընկնում է 1000: Քրդերը յուսահատած քաղաքից դուրս են խուժում և յարձակում անպաշտպան գիւղերի վրայ, աւարի են տալիս գիւղերը:

Շարաֆ-խանա գիւղացի Ղնդիի ասելով, Վանայ կոտորածին մասնակցել են հետևեալ ցեղերը. Պարսկաստանի քրդերից Հայտարանցի Թայիր խանը 20,000 մարդով, խան, ձիաւոր և հետևակ. Արուսից Թեմուրը 700 մարդով, Մլանցի Հասան աղի էլը 200 հոգով, Շաւէլցի Ճաֆար բէկը 300 մարդով:

Տաճկաստանի քրդերու (Շաւէլցի) 300, Հարստացի 10,000, Մկորցի Թէյմուրխանի էլից 1000 հոգի. Թակորցի Հիւսէն բէկը 300-ով. Մլանցի Մամմադ բէկը 700-ով. Շամուլցի Մագիմ բէկը 800-ով, Մարդիցի Շարաֆ բէկը 600-ով, Շաֆիթի 1,500: Սրանց հետ պիտի համարել շատ մանր ցեղեր և մինչև անգամ պարսիկ չարազարներ և բոստանիներ, որոնք հարկւրներով, հաղարներով վխտում են Վանում և շրջակայքում:

Կառավարութիւնը քրդերի և զինվորների պարտութիւնը տեսնելով, գլուխը կորցրած, Պլսից ստացած նոր հրահանգի համեմատ ծածուկ, գիշերով 5 հատ թնդանթ բարձրացնել են տալիս Սկըրբու քաղաք:

մենք զբաղած էինք քրդերի և բաշխողուկ կառավարութեան զինւորներով, որոտացին յանկարծ թնդանօթները և աակն ու վրայ արին մեր 4 լաւ զիրքերը և քշեցին դէպի քանարդի: Մէկ թնդանօթ Ակրբու քարից ցած են բերում և տեղաւորում Սամատ աղի տանը, որը ընկել է քանդուղի և Հանգոյց փողոցների միջև: Մենք յարձակեցանք թնդանօթաձիգների վրայ և ջարդեցինք բոլորին, որոնք թուով 18 հոգի էին. երբ ուզում էինք թնդանօթը քաշել տանել, էլի որոտացին Ակրբու թնդանօթները, որի ժամանակ մենք կորցրինք 6 հոգի:

22-ի գիշերը առաջնորդը Անգլ. հիւպատոսը և բողոքականաց միսիոնարները աշխատում են համոզել Հնչեան, Դաշկան, Արմենական ներկայացուցիչներին, որ եթէ յեղափոխականները ժողովրդի հետ միասին գուրս գան քաղաքից, իրանք իրանց խնամածութեան տակ կ'առնեն իգական սեռի պաշտպանութիւնը: Հաւատացնում են նրանց, թէ զինւորներին կը մնայ բաց դռներով աները, որոնք թալանելով յետ կը կենան ժողովուրդը կոտորելուց:

Առաջնորդին, հիւպատոսին և միսիոնարներին միանում են թուլամորթ վաճառականները և համոզում ժողովրդին ու գուրս պալիս քաղաքից, ուժով իրենց հետ տանելով և բոլոր յեղափոխականներին իբրև պաշտպաններ, «սեղով թէ մենք քաղաքից գուրս գալուց յետոյ էլ ձեռք պիտի պաշտպանէք: Յիզափոխականները ակամայից զիջում են նրանց պահանջներին և ճարահատեալ գուրս գալիս քաղաքից: Ժողովուրդը մըջինի պէս բռնում է ամբողջ Արաբայ լեռը: Հարուստները անգաւորվում են իհարկէ Արաբայ վանքի մէջ, իսկ հասարակ մահկանացուները՝ սարի վրայ: Երեք ներկայացուցիչները ժողով են անում և վճռում՝ որ քրդերի մի հոսանքի առաջը մենք և դաշնակցականները կտրենք, իսկ միւսը՝ Արմենականները: Երեք օր ժողովուրդը ապրում է լոկ մտով, այն էլ անլի:

Յանկարծ լսում են թնդանօթների ձայները, Մարտիկը և Պետոն շտապում են մարդ հասցնել վան, իմանալու համար թէ ինչ կայ և ինչ է կատարւում: Մինչև ժողովրդի քաղաք վերադառնալը, քաղաքը թալանում, քանդում և այրում են այն տները որոնք կարող էին հրոսակին իբրև դիրք ծառայել. ժողովուրդն էլ ոչխարի միամտութեամբ խաղաղութեան ձայն լսելուն սկսում է ներս վազել քաղաք, զէնք չունեցողները զոհ են գնում բարրարոսների սրին: Իսկ Ա. կան յեղափոխականները, որոնք յանձն էին առել պաշտպանել Արաբայի մի կողմը, առանց լուր տալու Մարտիկին և Պետոյին, թողնում քաշում են Պարսկաստան, տանելով իրենց 200 զինւած զինւորների հետ 600 անզէն արհեստաւորներ: Սակայն, դժբաղդաբար, սրանք էլ պաշարւում են Բարդուղիմէոս առաքնալի վանքում և կոտորվում թէ քրդերից և թէ քաղցածութիւնից. ազատւում են մօտաւորապէս 150 հոգի, որոնք մտնելով պարսից հողը խալիֆա աղի և Ալի աղի մարդկանցից ջարդուում են, որոնցից էլ 38 հոգի փախչելով կարողանում են ազատուիլ:

Երբ ժողովուրդը սկսում է իջնել քաղաք Դաշնակցական զինւորներից մի քանիսը բերում են իրենց հրացանները տալիս ներկայացուցիչին Պետոյին, իսկ միւսները վերցնում ու փախչում են, այսպիսով թողնում են ներկայացուցիչի մօտ 18 հոգի: Արտասոււմ է Պետոն և հայհոյում իւր վատ ընկերներին: Ար-

տասոււմ է Մարտիկը տեսնելով Պետոյի վիճակը գրկում է նրան, համբուրում և ասում. «Հաւատացած եղիք, եթէ ապրեմ պիտի լինինք միասին, իսկ եթէ վիճակված է մեզ մեռիլ. խօսք եմ տալիս, որ իմ բոլոր զինւորների հետ մինչև վերջին շունչը կը կռուինք ձեզ հետ միասին: Մարտիկը Պետոյի հետ 83 զինւած ընկերներով ճանապարհւում է դէպի Պարսկաստան օդանովան ձեռք բերելու համար: Նոքա ունենում են միայն նախաձաշիկի պաշար. մարդիկ են ուզարկում վարագ պաշար ձեռք բերելու, որոնք վեռադառնում են և մի վերաւորից բերում են հետեւեալ լուրը. Աւետիսեանը նոր էր հեռացել, երբ հասաւ Շաքիր բինբաշին 600 ձիաւորներով և արաբի տեղեւոր ամբողջ վանքը, կոտորեց բոլոր վանականներին: Պետոյի ընկերներից 25 հոգի երբ տեսնում են Շաքիրի գալը, թողնում են զէնքերը և փախչում քաղաք որպէս և նրանք, որ ապաստանել էին վանքում: Մի կերպ վերջապէս մերոնք Պետոյի հետ խլելով աւար տանոցներից մի քանի ոչխար, ճանապարհւում են դէպի Պարսկաստան: Մեռ ընկերները 4 հատ ձի խլելով քրդերից, ձիաւորում են Մարտիկին, Պետոյին և սրանց օգնականներին: Առաջին օրը 9 ժամ քալելուց յետոյ գիշերը հասանք Սեւանյ լեռը. իսկ երկրորդ օրը Սալախանու սարը: Սաստիկ յոգնած լինելով, երկրորդ օրը չկարողացանք հասնել մի ուղած տեղը: Քաղցածութիւնը և անքնութիւնը սաստիկ կերպով տանջում էր մեզ: Լուսադէմին հասանք Բաղիգաւա լեռը: Մարտիկը տեսնելով որ դժուար թէ խուժքը այդ ել և էջնեով կարողանայ մի ժամայ ճանապարհ վեր բարձրանալ, ասում է Պետոյին. գուք ընկերներով շտապիք հասնել մեր ուղած դիրքը, մինչև որ մեր ետեւ ընկերներն էլ հասնեն. բայց աշխատեցէք շատ խորը չքնել: Պետոն շարունակում է ճանապարհը, իսկ մերոնք թափթփում են լեռան լանջում և քարերի մէջ պարկում:

Առաւօտեան ժամը 6-ն է լինում, երբ երևում են մի քանի բանձար քաղող կանայք, որոնք նկատելով մերոնց, իսկոյն դէպի գիւղ են վազում հաւար կանչելու: Գիւղից դուրս են գալիս 150 զինւած քուրդ ձիաւորներ և յարձակւում մերոնց վրայ: Քնել է Պետոն, ոչինչ չէ լսում: Մարտիկը մերոնց հրահանգներ է տալիս և նախադարձակ լինում: Առաջին անգամից հէնց ընկնում է 5 հոգի, մեզանից 1: Քիւրդ կանանց պարը սուգի էր փոխվում: Տղերք արիաբար յեղափոխական կարմիր գրօշակը պարզած՝ առաջանում են դէպի Պարսկաստան: Մարտիկը կարծում էր որ Պետոն իրենց թողել անցել է Պարսկաստան. բայց յանկարծ երևան են գալիս Պետոյի երկու վախճը և յայտնում Պետոյի ուր լինելը: Մարտիկը վերադառնում է դէպի Պետոն և 3 ժամից յետոյ հասնում նրան: Բայց եթէ այդ 3 ժամը շարունակէին իրենց առաջւայ ճանապարհը, խուժքը ամբողջապէս աղատուած կը լինէր: Պետոն ներողութիւն է խնդրում իրենց՝ քնելու համար: Մարտիկը մեծահոգութեամբ պատասխանում է. քնել, բայց այդպէս քնել և մեր մի ժամուայ կոխը, 200 մարդու աղաղակը չսիւ, չեմ հասկանում:

Տղայք անօթի լինելով տարածւում և քնում են, կարգելով իրենցից մէկին պահապան: Ժամը 12-ն էր: Պահապանը մեզ բոլորիս արթնցրեց և մենք տեսանք որ չորս կողմից շրջապատուած ենք: Բոպէն կրիտիկական էր: Մարտիկը իւր խուժքը բաժնեց 8 մասի, որոնցից իւրաքանչիւրը բռնեց իրեն յարմար մի դիրք: Բայց ինչ

կարող էր անել 2 ամբողջ օր չուտող և չը քնողը, մի քանի ժամ առաջ կուրի դաշտից յետ եկողը, 100 փամիուշտ ունեցողը, 2,500 հոգուց բաղկացած ձիա-
ւորի դէմ: Մերայինք լինում են 83 հոգի, որոնցից 18 Գաշնակցականներ էին: Բացի դրանից թշնամու բըռ-
նած դիրքը ամենայնաբար էր և բարձր: Օրհասա-
կան լուպէն մօտ էր. տղայք երգում, գրկախառնում,
համբուրում, լալիս և վեհանձն կերպով նետում կըռ-
ւի դաշտը: Ժամը 2-ին սկսում է կռիւը և տեսում մին-
չև առաւօտեան 8-ը: Այս անհաւասար կռուում լս-
ւում է Մարտիկի անվեհեր և խորխտ ձայնը. «տղայք,
գնդակները խնայեցէք մի փչացրէք, արի եղէք...» Ձար-
կում է Պետոն աջ ոտի աղբիւրից, խնդրում է որ իրեն
վերջնեն, բայց տղայք ժամանակ չեն ունենում: Պե-
տոն օգնելու և «չայաստան» կրնկելով աւանդում է
հոգին: Ժամը 2-ին քրդերը գրոհ տալով սկսում են
50 հոգով աջ կողմից դէպի ցած վազել: Մեր 3 խում-
բերը ստիպւած են լինում իրենց դիրքերից դուրս գալ
և դէպի ցած վազել. երբ մօտենում են մերոնց, մե-
րոնք ցրում են դէպի ձախ. քրդերը գալիս են դէմ
յանդիման Մարտիկին: Մարտիկը կրակ է կտրում և իբր
կատաղած առիւծ դուռն է. «տղայք ձեզ տեսնեմ, հա-
սել է ժամը, ժամը օրհասական. կուեցէք մինչև վեր-
ջին շունչ:» Ուրտում են շեկացած հրացանները դուրս-
ելով 38 քրդեր: Ժամը 4-ին մեր վրայ յարձակւեց
120 հոգուց բաղկացած մի խումբ: Այդ ժամանակ մեզ-
նից ընկնում է 25 հոգի, իսկ քրդերից՝ 64: Ողջ
մնում են մեր տղերքից 8 հոգի: Մարտիկը պոռում է.
տղայք հրացանները ջարդեցէք: Ժամը ութ և կէսն էր,
ես իմ հրացանս ջարդեցի և սողալով ընկալ գետի մէջ,
որի եզերքում բուսած խոտերը պահեցին ինձ: Խոտերի
մէջ ծածկուած ես չէի երեւում: Գլուխս վեր եմ բարձ-
րացնում և ինչ եմ տեսնում. Մարտիկը, Տրդատը և
Վարդանը մէջք մէջքի տուած կռուում են առիւծաբար:
25 գնդակների ձայն լսեցի, որից յետոյ աթոն ինչ
լուեց: Ես կարծում էի որ 83-ից միայն ես պատուե-
ցի. բայց յետոյ նոթորում քրդերից լսեցի որ 3 հոգի
էլ են ազատել բարձրանալով լեռան անմատչելի տե-
ղերը. ինձ ձերբակալեցին նոթոր երբ ես գնում էի
նոթորի քահանայի տան դուռը, առանց իմանալու որ
այդ կողմի հայերը տեղափոխուել են խոյի մօտերը:
2օրս կողմից քրդերը դուրս թափւեցան, չըջապատեցին
և անխնայ ծեծել սկսեցին իբր զաւղի. (նոթորը Պարս-
կաստանում է). բարեբաղդաբար կառավարական զորանոցը
մօտիկ էր. ես ինձ մի կերպ ձգեցի զօրանոցը: Յետոյ
Պարսկաստան կարողացայ զօրքերի աջակցութեամբ
մտնել խոյ, որտեղ ինչ-ինչ հանգամանքների տակ մի
քանի օր էլ քնեցայ բանդում: Այժմ ազատ եմ
և իմ ընկերների մէջ:

ՍԽՈՐ.

ՏԵՂԵԿԱԳԻՐ Թ. ԴԵՐԵՀՈՍԵՐԻ

Ղեկավար յետոյ սկսան զանազան կեղեքումներ կա-
ռավարութեան կողմէ այս կամ այն պատրուակներով:

95 դեկտ. 15 ին գիշեր ժամանակ խումբ մը զին-
եալ ոստիկաններ Մ. Յակոբ աղա Գարիպեանի՝ որ հա-
զիւ ապատուած էր գրեթէ 3 տարուան անխրա բան-
տարկութենէ մը, տուել երթալով զայն ձերբակալած
և 1-2 օր վերջը գիշերանց, ձմրան ցուրտ եղանակին
տարած են Սեբաստիա, ուր կը մնայ ցարդ տեղոյն
բանտին մէջ: Անցեալ տարւոյ օգոստոսի մէջ Թաւա-

րացիներու վրայ ի գործ դրուած խժգժութեանց առ-
թիւ խանութներու փակման և Մուսափնի սպանութեան
խնդրու մէջ իբր գլխաւոր դերակատար ամբաստան-
ուած էր մի քանի տեղացի թուրք չարամիտ անձանց և
թրքապիտ հայերու կողմէ, և ահա այս անխրա զոր-
պարտութեամբ վերստին կը կրէ Գարիպեան բանտին
տառապանքները:

Մ. Յակոբ աղայի փոքր եղբայրը Պաղտասար էֆ.
իր բանտարկեալ եղբօր առօրեայ պէտքերն հոգալու
համար մարտի սկիզբն Սեբաստիա կուղևորի. սակայն
Ջառայի մօտ ձերբակալուելով աստ կը վերադարձուի:
Պաղտասար էֆ. այս անգամ անցագիր մը առնելով
(մինչդեռ մի վիլայէթի մէջ ձամբորդութեան համար
անցագիր առնելու ստիպեալ չէր) դարձեալ կերթայ:
Նորա անդ ներկայութիւնը որ իր մեծ եղբօր համար
տառապանաց ատեն մեծ մխիթարութիւն մ'էր, կառա-
վարութիւնը այդ իսկ զննալով ապրիլի վերջերը ընդ
հսկողութեամբ կրկին աստ վերադարձուց:

96 յունիս 17 ինքազաքիս պատուաւոր ընտանիք-
ներու պատկանող Ս. Հիւսիսեան, Ա. Թիւթիւնճեան
Ս. Օզանեան և Գ. Պուրնազեան հայ երիտասարդնե-
րն ալ ձերբակալուելով յանկարծ նոյն ամսոյ 22 ին
զսկուած են Սեբաստիա յանպատրաստից. առանց լուր
արուելու իրենց ընտանեաց, գելարաններով պրկուած
իրենց ձեռքերն: Միևնոյն ամբաստանութիւնը տեղի ու-
նեցած է նաև քաղաքէս այս 4 երիտասարդներու հա-
մար, որոնք ցարդ յանիրաւի կը կրեն բանտի նեղու-
թիւնները:

Նախորդ միութեսարեֆ Հագգը պէյ, որ դէպքէն
8 օր վերջ եկած էր, ցոյց տուած էր իւր անաչառ,
արդարասէր և խաղաղասէր ոգին ու ընթացքը: Տեղ-
ւոյս թուրք գօմիթէն տեսնելով որ կառավարիչը չը
հալիր իւր կողմն և ընդհակառակը կուզէ խոչնդոտ
կանգնել իրենց չարահամար մեքենայութեանց և կոր-
ծանարար խորհուրդներուն, 1-2 ամիս վերջը սկսաւ
անոր հակառակիլ և պաշտօնանկ ընելու միջոցները ի
գործ դնել, մինչև իսկ խորհուրդ ընել զինքն սպանե-
լու և հայոց վերադրելու. ինչպէս որ խորհուրդը ը-
րած էին գիշերանց հայոց եկեղեցիին և պանդոկին մօտ
վերջերս հաստատուած պահականոցին վրայ յարձա-
կելով պահակ վիճակները՝ նոյնպէս նաև հայոց թա-
ղերը չըջող գիշերապահ ոստիկան զօրքերը սպանել և
հայոց վերադրելով հայերու վրայ յարձակում ընելու
առիթմն ունենալ: Սակայն միութեսարեֆն իւր աշաւուրջ
և չըջահայեաց հսկողութեան շնորհիւ տեղեկանալով
այս բոլոր չարանիւթ խորհուրդներուն, յաջողած է
պատահելիք չարեաց առջնն առնելու և պարագլուխ-
ներէն Պէլէտիէի ըէիս Սապիթն բանտարկելու և Սե-
բաստիա զրկելու: Նոյն ինքն այս Սապիթ կուսակալու-
թեան կողմէ փոխանակ բանտարկուելու և պատժուե-
լու ազատ ձգուած և քաջութեամբ վերադարձած է
հոս, միևնոյն ժամանակ կուսակալէն հեռագրուած է
տեղւոյս միութեսարեֆին թէ այս և ասոնց նման մար-
դերը հալածելու կամ կաշկանդելու պէտք չը կայ:

Պառավարութեան Գօմիթէն իւր միւս խորհուրդ-
ներուն և փորձերուն մէջ անաջող, Պայրամի առթիւ
ուղած է իւր չար դիտաւորութիւնն իրականացնել.
ուստի մի քանի օր առաջ չըջակայ գիւղերը յայտա-
բարութիւններ ցրուած է Պայրամի օրուան յարձե-
մն պատրաստուելու համար և ինքն քաղաքին մէջ
սկսած էր պատրաստուիլ. սակայն այս միութեսարեֆի

հաղորդուելով ձեռք առնուած ազդու միջոցներու շնորհիւ անգործադրելի մնացած է. այսպէս հայոց խոհեմութեամբն ու արթնութեամբը և միւթասարքի խաղաղասէր բնավորութեամբը քանիցս վերահաս չարիքներու առջևն առնուած է:

Ղուկաս Տէօփէթեան հայ կտրիճ երիտասարդը որ երկար ատենէ ի վեր իւր տան մէջ պահուած կը գտնուէր և քանիցս կառավարութեան կողմէն խուզարկուած բայց գտնուած չէ, իւր մասին ընդհանուր կասկած մը տուած էր թէ ինքն ևս փախստական եղած է և Մուսլիմը սպանողներէն: Ապրիլ 15 ին ուրիշի մը անխոհեմութեան զոհ գնաց. իր տան մէջ ձերբակալուելով աստ քանի մը օր հորցաքննելէ վերջ զըրկուեցու Սերաստիա, ուր կը գտնուի այժմ իր միւս հայրենակիցներու հետ:

Մայիսի սկիզբները տեղոյս հայ վաճառականներէն Անդրանիկ Պ. Վարդեան ևս Սերաստիայէն եկած հեռագրի մը համաձայն ձերբակալուած և մի քանի օր տեղական կառավարութեան բանտը մնալէ յետոյ զըրկուած է Սերաստիա. սա ևս ամբաստանուած է Մուսլիմի խնդրով:

Ինչպէս րամազան պայրամի, նոյնպէս և գուրպան պայրամի առթիւ պատրաստութիւններ կրկնուեցան և շուկաներ ցարձրացան թուրքերու կողմէն. բայց դարձեալ ըստ առաջնոյն շարժումները զսպուեցան:

Կառավարական Գօմիթէն տեսնելով որ միւթասարքը համակիր և համամիտ չը գտնուիր իրենց և ընդհակառակն իրենց ուժերը ջլատելով կաշնատի ղերներ ևս կեցնել իրենց բարբարոսական գործերէն սկսան յայտնապէս հակառակիլ և անոր նկատմամբ հեռագիրներ տեղացնել իրենց պաշտպան և համակիր վաճիւն և միւս և Բ. Գուր: Միւթէսարքին այս բարի և խաղաղասէր ընթացքը սուլթանին անհաճոյ լինելով պատճառ եղած է իւր պաշտօնանկութեան՝ հակառակ տեղոյս հայ և յոյն ժողովրդեան տուած գովեստին և գոհունակութեան հեռագիրներուն որոնց դէմ լռութիւն պահուած է:

Վերջերս ալ տեղոյս թուրք Գօմիթէն և ժողովուրդը լսելով Վանի և Նիկսարի արիւնահեղ դէպքերն ու կոտորածները դարձեալ յարձակում ընելու որոշումն ունեցած և մզկիթները զէնք լեցուցած է մէկէն յարձակումն սկսելու համար: Թուրքերու այս պատրաստութիւնը և մտադրութիւնը լսելով նորընտիր առաջնորդ. տեղապահ Ս. Հայրն անմիջապէս դիմած է տեղոյս նորեկ միւթէսարքին և զինուորական հազարապետին և այսպէս նորէն չարեաց առջևն առնուած է: Սակայն միշտ պակաս չեն այս կարգի տարածած թիւը, որոնց մէջ թուրքերու ծրագիրն կը ներկայացուի շատ աւերիչ և սոսկալի, հայոց թաղերը հրդեհել և ապա հայերը սրէ անցնել:

Հարձակման այսպիսի տարածանքութիւններն ոչ միայն քաղաքիս, այլ ամէն տեղ կան ու կը շրջին:

Թող տակաւին անտարբեր հանդիսատես լինի մարդասէր և քաղաքակիրթ Եւրոպա այս դժոխային տեսարաններու առջև և քրիստոնեայ ժողովրդեան կրած այս սարսափներուն ու տանջանաց անկարելից գտնուի սրտի և խղձի հանգարտութեամբ:

Յունիս 25-ին քաղաքիս մէջ 14-15 հայոց տուները խուզարկուեցան մանրակրկիտ կերպով կառավարութեան կողմէ: Ասոր շարժումիւ կը համարուին 4 հայ երիտասարդներ՝ Գեորգ Պողոսեան, Նիկողոս Օղան-

եան, Թորիկ Խոսեան, Թորիկ Տ. Պետրոսեան (ֆէլէկեան), որոնք իբր թէ յունիս 10-ի երեկոյին տեղոյս հաւուստ աղագայիններէն հաղարէթ Հիւսիսեանի տունը երթալով սպանուելոք դրամ առած լինին, քանզի յիշեալ և իւր եղբայրն այսպէս տեղեկացուցած են կառավարութեան բողոքագրով մը, որ 4 երիտասարդներու հետքն գտնելու համար խիստ հսկողութիւններ ի գործ կը դնէ քաղաքիս մէջ:

Մեր վիճակ այսպէս խիստ անպահապան կացութեան մէջ կը գտնուի, քանի որ կառավարական գօմիթէն միշտ դաւեր կը նիւթէ և առիթի մը կսպասէ վերջին հարուածը տալու համար հայերու գլխին և քանի որ կառավարական մեծ և ստորակարգ շրջանակները հաշտ աչօք չեն նայեր մեզ:

Արեւմտիս, Անդրէաս, Ածալտեր և այլ տեղեր տարիներէ հետէ հաստատուած տեղոյս հայ վաճառականներն և այլն քանի ամիսներ առաջ իրենց խանութներն փակելով տեղս վերագարձուցին, վերստին երթալու չեն թողուր. ինչ լաւ կառավարութիւն և ինչ լաւ խտրէ. նախ աւարել ունեցածնին և ապա առօրեայ ապրուստին ճարելու միջոցէն ալ զրկել:

Գարունէ սկսեալ այս ճամբով մինչ ցարդ Պօլիսէն իրենց հայրենիքը քսոր զոհուած հայոց թիւն 250 էն աւելի է, որոնց 100 էն աւելին տեղացի և շրջականերէն էին, մնացեալք Ակնցի, Արաբկերցի, Տիփսիկցի, Արմուտանցի, Բալուցի և այլն: Այս քսորեալներու խեղճութիւնը ու թշուառութիւնը աննկարագրելի է. առաւարակ բոկոտն, անօթի, մերկ, եթէ ոմանց քով ալ քանի մը զոռչ գտնուած է նա ալ ոստիկանաց կողմէն ճանապարհին կողոպտուած է: Եթէ ճամբորդ քսորեալներու տեղացիք որ և է օգնութիւն ընելու լինեն այդ իսկ տեղական կառավարութեան կողմէ կարգիւրուի. ինչպէս որ բերին այնպէս ալ կը զրկեն իւրենց հայրենիքները: Վեհափառ աւազակ սուլթանը կերելի թէ հետեւեալ նկատումներով այս խեղճերն իրենց հայրենիքը կը վերագարձնէ. Ա. որովհետեւ իր հայ հպատակներուն արգելած է որ և է նուիրական պարտականութիւն կատարել, մինչդեռ նկատելով թէ անոնք Պօլիս մնալով անխելքութեամբ իրենց կոտորեալ և կողոպտեալ ընտանեաց նիւթապէս օգնելով պիտի փճանան ուստի կը որոշէ ժամ առաջ հայրենիք զրկել. Բ. նկատելով թէ իր ուշիմ աշակերտները (թուրք բարբարոս խուժանը) իր թելադրութեամբ միշտ պատրաստականութիւն կը ցուցնեն երկրորդ ընդհ. յարձակումի մը. ուստի Պօլիս գտնուած Հայաստանցի հայ պանդուխտներն պատշաճ կը տեսնէ իրենց սիրելեաց մօտ դարձնել վերջին կարօտնին «առնելու» համար: Գուցէ ոմանք առարկին թէ սուլթանի միտքը ուրիշ է. լսելով որ «քսորեալները սուլթանի կողմէ խուճարարներ նկատուելով» Պօլիս մարքել կուզէ: Այդ առարկութիւնը ճիշտ կըլլար եթէ բարեգութ Համիտը Պօլսոյ չափ հոգածու ըլլար նաև Հայաստանի մասին, այդպիսիներն Պօլսոյ լրագրաց պաշտօնական հաստատման մէջ ամէն օր հրատարակուած հեռագիրներն թող կարդան և տեսնեն թէ գաւառներն որչափ անգործ են ու հանգիստ են շնորհիւ վեհափառ աւազակ սուլթանի: Միթէ սուլթանը յիմար է, ապուշ է որ այդպիսի սխալ հրամաններ արձակէ: Իրաւ է թէ թեքածը կը լզէ, իրաւ է թէ հայը շուտով երկրի տառապանքներէն աղտաւել կուզէ (հանգստացնել), բայց միւսնոյն ատեն Հայաստան այնչափ կը սիրէ որ երբեք անորժելի չեգար խուճեալ ըլլալը:

Ածպտերի գէպքին համար բանտարկեալներն յու- նիս 19-ին առաւօտ Կիրասօնի ճամբով Պօլիս տը- ունցան: Բանտարկեալները թուով ութ հոգի են և վեր- ջերս ստացուած տեղեկութիւններէ համեմատ հաստատ- ունցաւ թէ կամ Աքիա և կամ Գարպ Թարապօլուս արտը ուղարկուած են: Բանտարկեալը մեկնուած (ինչպէս ամեն բանտարկեալներու) կանխաւ ոչ ոքի իմացուցած չէր կառավարութիւնը, որովհետեւ գիտէր թէ եթէ ի- մացներ, բանտարկեալը ընտանիքներն ճանապարհի պա- շար և այլն պատրաստելով ծախուց կենթարկուէին. մինչ- գեռ կառավարութիւնը հայրախնամ գութով այդ ամենը նախապէս իր մալիւէն հոգացած էր, թէ ինչպէս — բանտարկեալը պաշարի փոխան կառավարութիւնը ոտքե- րուն շղթայ, ձեռքերուն քէլէփճէներ դրած էր. ճա- նապարհի ապահովութեան համար ալ միւլազմ մը և 15 է աւելի ոստիկաններ ընկերացուցած: Այս միւլազմը կառավարութեան հոգածութեան գիտակ լինելով, 3 աւուր ճանապարհն՝ երկու տարուան բանտարկեալնե- րու՝ 24 ժամէն կտրել տուած է: Բանտարկեալը որպիսի լաւ կամ գէշ ճամբորդէն ալ ևս ընթերցողաց խոր- հրդածութեան կը յանձնուի: Կիրասօնէն այդ անպի- տան միւլազմին 10 ի չափ արտըրէսներ կը յանձնեն աստ բերելու համար. այս վատ գաղտնը տարած բան- տարկեալը շղթայք և այլն զոր աստ պիտի վերադար- ձնէր փոխադրութեան պարզ և դիւրին միջոց մը գը- տած էր իր հետ բերելիք արտըրեաց զարնելով:

Ահա հայոց վիճակը և ահա կառավարութեան բըռ- նած ուղղութիւնը. այրել, կողոպտել, կոտորել և սպան- նելէ վերջ յագուրդ չըղջալով թերի մնացածներն (եթէ կայ) կուզէ ամբողջանել:

Կառավարութիւնը լաւ համոզուած է որ հայը քայ- քայուած է, մերկ է, անօթի է. օրական հացը ճարելու միջոց չունի այսու հանդերձ դարձեալ ամեն օր կա- տարեալ խտութեամբ քողք թէ գիւղ տուրքերու հա- ւաքման սաստիկ եռանդ մը կայ. չարչարանք, բան- տարկութիւն պակաս չէ անոնց համար երբ տուրք չի կարենալ տալընուն համար առարկեն թէ կողոպտե- ւած են և այլն. թուրք պաշտօնեաները հայոց վիճակին իբր անգիտակ զարմանալ ձեւացնելով միևնոյն ատեն դժոխային ծիծաղ մը ձգելով կը պատասխանեն թէ միթէ ամենքդ ալ կողոպտուած էք. ասոնց բռնած յընթացքը սուտ խն ԼԼԽԼ վանուց հաւերը կրել է:

ՆԱՄԱԿ ՀԱՆԳԻՑ

Հալէպ, 24 յունիս 96.

Այս տեղերու կացութիւնը կը շարունակէ ըստ ա- ռաջոյն: Օտար կամ թիւրք քննիչ պաշտօնեաներ ու գործադիր կոչուած մարմիններ կուգան ու կերթան ա- ռանց դոյզն խաղաղութիւն մը տալու գործին. առ այ- ժըմ խաղաղութիւն և անկարելի բաւերը հոմանիշ են մեզ համար:

Տասն և հինգ օր առաջ Այնթապի մէջ թիւրք ժողովրդեան կողմէ տեղի ունեցած ցոյցը սարսափ աղ- դած է թէ տեղւոյն ու շրջակայի քրիստոնեաներուն և թէ նոյն իսկ կառավարութեան, որը ըստ քմաց խու- ժանին՝ կը փոխէ իր ընթացքը և կը համակերպի յա- րուցուած փափաքներուն:

Այժմ ամեն տեղ թիւրք ժողովուրդը միշտ ըս- պառնալից դիրք մը ունի կառավարութեան դէմ, այնպէս որ մօտ օրէն կամ վերստին հաստատուելով

Տէրէպէյի-ական զրուծիւնը, երկիրը պիտի մատ- նուի կատարեալ անիշխանութեան և կամ սուլթանը պիտի ստիպուի իր ժողովուրդը զսպելու համար եւրօ- պական ոյժի մը ներմուծման համակերպել:

Շամի խնդիրը կը լսենք թէ կը սաստկանայ: Հա- լէպի ժողովուրդը իմանալով դամասկոսցիներու ըէտիֆ տալը մերժած լինելը, իրենք ալ խլրտման մէջ են և տրտուշով կը պատրաստուին հակառակիլ և մեր- ժել Հալէպի երրորդ թապուր ըէտիֆներու հաւա- քումը: Այնթապ նոյնպէս թիւրքերը յուզումներ ու- նին նոյն տեղի երրորդ վաշտի հաւաքման հակառա- կելու նպատակաւ:

Մի քանի օրէ ի վեր կը լսենք թէ Բէշի գա- ւառը մերժած է յանձնել իր փախստական զինուոր ները, վճարել տուրք և վերադարձնել թալանուած ապրանքները. բացի ասոնցմէ բացարձակապէս անհը- նաղանդութիւն յայտարարած են: Այնթապը բարե- կարգելու գնացող Ահմէտ Լուֆթի փաշան հոն զըր- կուած է խաղաղութիւն հաստատելու, բայց տեղացիք լեռը քաշուած են. փաշային հրամանով զինուորնե- րը թալանած են Գէրթի շէ գիւղը: Այս խնդիրը մեծ կարեւորութիւն ստացած է, իրեն հետեւեցնելով ու- րիշ մի շատ գաւառներ, որք արդէն ապստամբական դիրք մը ունէին:

Բէշի գաւառը կը բաղկանայ 73 ընդարձակ, բեր- րի գիւղերէ, Այնթապէն 8-12 ժամ հեռաւորու- թեամբ մերձ ի Հոռմկայ: Ընտիր և առատ պիտտակ և ձիթապտուղ կարտադրէ. ժողովուրդը մեծ մասամբ կը բաղկանայ Եզդիտներէ և Գլլպաշներէ:

Այստեղ Անէյզէ կոչուած արաբներն ալ մեր- ժած են տասանորդի և ոչխարի տուրքը վճարել: Վերջինը խիստ կարեւորութիւն ունի, որովհետեւ ա- մենամեծ գումարը կը բարդէ կուսակալութեան մուտ- քին վրայ: Միլիօնաւոր ոչխարներ կը գտնուին և ոչխար գլուխ երկու Փրանկ տարեկան տուրք կը վճարուի, մէկը շէյխին, իսկ միւսը կառավարու- թեան: Կրտսի թէ 800 էսթերլի զինուոր զրկուած է հաւաքելու համար:

Սուրիոյ մէջ անիշխանական վիճակը ընդհանրա- ցած է: Ամեն կողմերէ զօրքերը կը հաւաքուին: Լուր կայ թէ այդ զօրքերու թիւը պէտք է հասնին 50- 60 թապուր՝ ապստամբ տիւրքիներու վրայ քալելու: Իսկ Տիւրքիներն ալ արդէն հաւաքուած ունին այդ- չափ ոյժ և հետզհետէ ստուարանալու վրայ է թըր- քական բանակին զիմադրելու համար:

Ե-Դ.

ՆԱՄԱԿ ՄԱՐԵՑԻՑ.

Մարաշի վերջին կոտորածը ահաւելի վէրք մը բա- ցած է հայ ազգաբնակչութեան սրտի մէջ, որոնք ողջ մնացած էին: Առանց բացառութեան հարուստի ու աղ- քատի հաւասարապէս կը տիրէ թշուառութիւնը, ա- նօթութիւնը, մերկութիւնը, կառավարութեան ու նոր կոտորածի մը սարսափները: Հայերը բոլորովին որոշած են հեռանալ երկրէն և արտասահման անցնիլ մինչև իսկ ճանապարհները խտով և բուսականութեամբ կե- րակրուելով, եթէ միայն կառավարութիւնը թող տայ, մինչդեռ թշուառները ստիպուած են իրենց տներէն դուրս ելլելու չը համարձակել: Ամերիկեան միսիօնարաց ձե- ւամբ բաշխուած ուստեսը կը բաղկանայ միմիայն չոր

Հացէ, այն ալ անօթի չը մեռնելու աստիճան: Պատ-
րիարքարանէն և ուրիշ տեղերէ այս միսիօնարաց կու-
գար նպաստները, սակայն այսօր այն ալ երթալով նը-
ւաղելու վրայ է, որով իւրեանց առջև անօթութենէ և
այլ թշուառութենէ յառաջ գալիք սարսափելի վտան-
գը հաւանական է: Այժմ գրեթէ նպաստներ հաւու-
ցանելու շարունակութիւնը նուազած է: Գէթ առ այ-
ժմ իրենց համար ձմեռուան պատճառները աւերը ան-
նկարագրելի է. չունեն ոչինչ իրենց ձեռքերը թէ մի-
ջոց և թէ ապահովութիւն որ կարողանան ձմեռուայ հա-
մար մի չնչին պաշար ձարել: Կառավարութիւնը գաղտ-
նի կը դրդէ խուժանը առանց յայտնելու և երևան հա-
նելու, բոլորովին բնաջինջ անելու համար հայ տարրը
Մարաշի և շրջակայից մէջ: Գաղտնի սպաննուողներու
թիւը մինչ ցարդ, որը միշտ կը շարունակուի, հաշիւ չու-
նի. նոյն իսկ սպաննուած տեղերնին թաղուելով խեղճ
հայերը: Նշանաւոր հարուստներէն ոչ մին չը մնաց որ
չըսպաննուէր կամ չը թալանուէր: Կարապետ աղա թո-
փալեանը, որը առաջին անգամ սպաննեցին, իւր ահա-
գին հարստութիւնը ամբողջապէս փճացուցին: Իսկ կա-
ռավարութեան գծնթրաթճի Գէորգ աղա, Աւետիս աղա
և Յակոբ աղա խրոլախեանները թէև բան մը չը վնա-
սեցին, սակայն կառավարութեան վրայ ունեցած 21,000
օսմ. ոսկի առնելիքնին բոլորովին կոնսնցուցած են. . . խեղճ
կառավարութիւնը իրեն պաշտօնեաններուն և զինուորնե-
րուն ամսականները չը կրնար վճարել և պիտի ելլէ
կեալուրի մը ահագին պարտք պիտի վճարէ. . . Կոտու-
րածի ժամանակ կառավարութեան յատուկ հրահանգով
յիշեալ խրոլախեաններու տունը և վաճառատները զօր-
քերով շրջապատուեցաւ որ թուրք ու օտար խուժանը չը
համարձակին թալանել. քանզի կանխատեսած էր, եթէ
այդ զգուշութիւնը ձեռք չաւնուր, կառավարական պաշ-
տօնեաններն ու զինուորները անօթութենէ պիտի սատկե-
ին: Անցեալները Զմիւռնիոյ ալմանական վարժուհիները
քաղաքէս 15 որք հայ աղջիկներ պահանջած էին ձիւ-
սպէս պատուելի Յակոբ էֆ. Թաշճեանի տեսչութեան
տակ գտնուած «Դէսնէսիոսեան» վարժարանը ընդունե-
լու և զանաք կրթելու ու դաստիարակելու համար որ-
պէս մի մարդասիրական գործ: Այս տեսակ թշուառ,
անծնող, անտէր որբերու թիւը անհաշուելի լինելով վեր-
ջապէս որոշուեցաւ 15 հաստ հայ աղջիկներ՝ 3—14
հասակաւ: Ուրիշ մի որբուհի, որոյ ազգականներն
մի քիչ կարողութիւն ունէին, աղաչեցին որբուհիները
փոխադրող հային որ այդ որբն ալ յանձն առնու-
տանիլ 15-ին հետ ի Զմիւռնիոյ, վճարել խոստանա-
լով նորա ծախսերը: Անդին միւս խեղճ որբուհիներ-
ը երբ կը լսն զայս, կը վազեն կուգան այն հային
քով որ պիտի տանէր զանոնք, և ահա հոս կը պար-
զուի մի սրտաձմիկ սարսափելի տեսարան, որը կը ցատ-
կէ մարդուն վիզը, որը կը կախուի ուսէն, որը կը գըր-
կէ անոր ձեռքը և թոյլ չը տար, որը կը պլուշի ոտ-
քերուն ու ծնկերուն, ամենքը մեաբերան աղաղակելով,
լալով ուղղալով թէ «զիս ալ տար, խնդրիմ զիս ալ
տար, մէկը չունիմ. գուրսը կը պառկիմ, անօթի եմ:»
և հոռ կսկսին պատմել իրենց ծնողաց կոտորուելուն
պարագայները և սրտի փղձկելիք տեսարանները: Այս
սարսափելի իրողութեանց առջև կստիպուիմ լուսն ա-
նէճը կարգալով մի միայն գարշելի Եւրոպայի շահա-
գէտ քաղաքականութեան վրայ որ այսօր դեռ և դեռ
կը պարծի իւր մարդասիրութեամբ երբ անդին հա-
րիւր հազարներու արիւնով կը լուսայ իր ձեռքերը ա-

մեն օր. ամօթ նորա մարդասիրութեան որ մի անօթի
ժողովուրդ կուզեն անօթութեամբ ոչնչացնել:

ՀՈՒՐ ԵՒ ՍՈՒՐ.

Կուսակցութեան գանձարանում շնորհակա-
լութեամբ ստացվել են հետևեալ գումարները. —

ԹԻՒՐԿԻԱՅ. — Բ. քաղաքից. ռմբ 125 ֆր., ռմբ 100
ֆր., ռմբ 60 ֆր., ռմբ 35 ֆր., ռմբ 30 ֆր., ռմբ 25
ֆր., ռմբ 25 ֆր., Աղեղից 22 ու կէս ֆր., Մ. Գ. -ից
20 ֆր., Գ. Զ. -ից 20 ֆր., Զ. -ից 20 ֆր., ռմբ 13 ֆր.,
ռմբ 7 ու կէս ֆր., ռմբ 5 ֆր., ռմբ 100 ֆր., ռմբ 10 ֆր.:

ՀԱԼԷՅՑԱՐԻԱ. — Ժընէվ Բ. -ից Տ. Բ. -ի նախաձեռ-
նութեամբ կազմված վիճակահանութիւնից Ժընէվի
Հնչ. Մասնաձիւղի ձեռքով 55 ֆրանկ և Տ. Բ. -ից
5 ֆրանկ:

ԲՕԼԳԱՐԻԱ. — Ռուսչուկի Մասնաձիւղի միջոցով
170 լէվա հետևեալներից. Մասնաձիւղի Գործաւորաց
խմբից 140 լէվա, Պ. Փոքր Սրբուգ 16 լէվ., Բ. Բ.
Նազըմ պէյ 5 լվ., Վարդան Մամիկոնեան 5 լվ.:

ՌՈՒՄԱՆԻԱ. — Փոք. քաղաքից Ռուսաւահայք
39 անգլ. ոսկի, 11 շիլ. և 11 պէնս:

Բարիւրայ ք. -ի Մասնաձիւղի միջոցով, նախաձեռնու-
թեամբ Կար. Բարիքեանի — Բոցից, Ճիվանից, Ժիրայ-
րից, Մամիկոնից 30 ֆրանկ. Մամիկոնեան խմբի ան-
գամներից, Պերճից, Արշաւիրից, Մալխասից, Արամից,
Արաշից, Արմէնից, Աշոտից, Փարհատից, Սագոից և
Սմբատից 25 ֆրանկ. Սասուն խմբի անգամներից, Զա-
լադէց, Արմայիսից, Միսաբից, Միսիթարից, Արմատից,
Միքէից, Մինէից, Անդրանիկից, Պարգեից, Պարսամից
25 ֆրանկ:

ԵԳԻՊՏՈՍ. — Գահիրէից նպաստ Զէյթունի 225
անգլ. ոսկի, 9 շիլ. և 7 պէնս:

ԱՆԳՈՆԻԱ. — Լոնդոնից, Հասէնից, 1 անգլ. ոսկի:

ԹԻՒՐԿԻԱ. — Կ. քաղաքի Մասնաձիւղի միջոցով 500
ֆրանկ: Այս գումարը ստացվեցաւ մի քանի ամիս ա-
ռաջ, սակայն պօստային թիւրիմացութիւնների շնորհով
այդ գումարը որ կողմից ուղարկվելը անյայտ լինելով,
մինչև օրս չը կարողացանք հրատարակել: Դրա ման-
րամասն ցուցակը կը տպագրվէ յետագային:

ՌՈՒՍԼԱՆԴԱ. — Բ. քաղաքի Մասնաձիւղի գանձա-
րանը — Կաւիթ բէկից 7 ռուբլ., Հայրապետի խմբից
(Փ. -ից) 37 ռ. 33 կ., Ղուլա. 3 ռ., Ը. Կրուսնշոյլ 40 ռ.
Աստուր 10 ռ.:

«Ա Պ Տ Ա Կ»

ԵՐԳԻՅԱԲԱՆԱԿԱՆ - ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Երբ տեսաւ իր ժամանակին «Ապտակի» երրորդ տարւայ թիւ
3, Յուլիս ամիս: Բովանդակութիւնն է. —
Խօսակցից. — Մեւ ու Կարմիր երգ (ոտանաւոր). —
— Մեծ մարդը. — Ազգային նորագոյն պատմութիւն (Դարոցական
հարցաքննութիւն). — Վարդապետարանի հայաստանի (նոր տպա-
գրութիւն). — Ենթամթ պրօպագանդիստը. — Լուրեր Ամերիկա-
յէն. — «Ապտակի» հանդիմանքը. քննադատութիւն 4:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ
և դրամ ու մանդատ ուղարկել հետևեալ հասցեով. —

M. Beniard. — 22, Ormiston Road, Shepherd's Bush
London W. [Angleterre].

ՏՊԱՐԱՆ

«ՀՆԱԿ»-Ի.

ԼՕՆԴՈՆ.